



ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Ը. Տարի, Թի 4, Մարտ 2025



ԴԱՌՆԱՆՔ ՀԱՒԱՏԱՐԻՄ ՄՇԱԿՆԵՐԸ ՀՈԳԻՒ ՊԱՐՏԵՋԻՆ

Մարդկային իրաքանչիւր հոգի նման է պարտեզի մը. Հողագործը եթէ իր պարտեզին հող չտանի, չխնամէ, մոլախոտերը չհեռացնէ, կարելի է հունձքի ժամանակ առողջ եւ առատ բերք ապահովէ : Նոյնը չէ միթէ հոգիի պարտեզին, եթէ հող չտանինք, չխնամենք, անտեղի ու չար մոլախոտերը չհեռացնենք, կրնանք ապահովել որ Աստուծոյ խօսքերը որպէս ճշմարտութիւն այնտեղ կ'արմատաւորուին ու առաւել կը ծաղկին, բնականաբար ոչ:

Այսօր, եթէ նայինք մեր անհատական, ընտանեկան, հաւաքական, ազգային թէ եկեղեցական կեանքին, նոյն հարցադրումները պիտի կատարենք: Անպայմանօրէն պէտք չէ մտահոգուիլ բաւարար բերքի ապահովման մասին, այո՛ր բերքը կրնայ եւ առատ ըլլալ, սակայն աշխատողներու, մշակողներու պակաս կայ: Դաշտերը ընդարձակ են, սովորական կեանքի եւ կամ հոգեւոր, հաւատքի կեանքի, ու այդ պատճառով դէմ հանդիման կը գտնուինք աշխարհիկ ու հոգեւոր ճգնաժամերու: Մեծ ուսուցչապետը՝ Աստուածորդին առիթով մը երբ Գալիլիոյ մէջ կ'ուսուցանէր, արքայութեան անտիար կուտար, կը բժշկէր ժողովուրդին փստերն ու հիւանդութիւնները, յանկարծ նշմարեց որ ժողովուրդը կարիքը ունի իսկական հովիւներու, մշակներու եւ դառնալով աշակերտներուն ըսաւ. «Հունձքը առատ է, բայց մշակները՝ քիչ: Հետեւաբար խնդրեցէք Տիրոջմէն, որ իր հունձքին համար մշակներ դրկէ»:

Աստուծոյ առքայութեան պարտեզը որպէս աշխատավայր ընդարձակ է, սակայն անհրաժեշտ է ունենալ օգնական ձեռքեր, պատրաստ աշխատելու:

«Հունձքը առատ է»: Աստուծային ճշմարտութիւններն ու օրհնութիւնները բազմապատիկ են: Աշխարհը եւ այդ նոյն աշխարհին մէջ ապրող Մարդը պէտք ունի վերափոխման. եւ Աւետարանը որ Աստուծոյ խօսքի ճշմարտութեան դարանն է, այն սերմնահատիկն է որ ուժը ունի իր տուած առատ բերքով փոխելու մարդկային կեանքերն ու հոգիներու դաշտերը: Իսկ եթէ խոպան ձգենք այդ դաշտերը, ինքնաբերաբար կը կորսնցնենք նաեւ այդ բերքը:

«Մշակները քիչ»: Այո՛, արնդհատ աճող հոգեւոր բերքի դիմաց մշակներու թիւը կը պակսի: Յաճախ մեր ուղիէն կը շեղինք, երբեմն այնքան աշխարհիկ հոգեբով ու մտահոգութիւններով կը տարուինք, որ ժամանակ չենք ունենար եւ կամ չենք տրամադրեր հոգեւոր պարտականութիւններով զբաղելու: Յիսուս անընդհատ կոչ կ'ուղղէ մեզի ըլլալ հաւատարիմ մշակները իր այգիին:

Չմշակուած այգին կը դառնայ խոպան: Բնութիւնը մեզի կը սորվեցնէ որ եթէ այգին չխնամուի անապատի կը վերածուի: Նոյնպէս, եթէ մեր հոգիի այգիները չխնամենք, Աստուծոյ խօսքը չլսենք, չճանայենք, հոգեպէս կ'ամլանանք: Վայրի եւ վիսասակար ազդեցութիւնները կը սկսին արմատաւորուիլ, խեղդելով Աստուծոյ կողմէ մեր մէջ սերմանուած բարութիւնը:

Եթէ կ'ուզենք բարգաւաճ բերք ունենալ մեր կեանքին մէջ, ինչպէս նաեւ մեր համայնքներուն մէջ, պէտք է անսանք Աստուծոյ կոչին: Ժամանակն է այսօր, եւ վաղը ուշ է: Իբրեւ հաւատքի մշակներ արդարութեան սերմերը ոռոգենք՝ սիրով, համբերութեամբ եւ հաստատականութեամբ:

«Հունձքը առատ է, բայց մշակները՝ քիչ»: Պատրաստ ենք ըլլալու հաւատարիմ մշակներէն մէկը, ստանձնելով պատասխանատուութիւնը՝ մշակելու մեր անձերուն եւ մեր նմաններուն հոգիի պարտեզները, որպէսզի երբեք անոնք խոպան դաշտերու չվերածուին ու չդառնան մէկական անապատներ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Աղօթելը յոյս ունենալ է: Յոյսը՝ վստահիլ: Վստահիլը՝ հաւատալ»:

Աշխարհը լի է զանազան մարտահրաւերներով, որոնք երբեմն կը ծանրաբեռնեն մարդ արարծը: Այդ ծանրաբեռնութեան մէջ երբեմն մարդը կը սկսի մոլորուիլ: Մոլորութիւնը զայն կը մղէ անորոշութեան, եւ ան առաջնորդողի մը կարիքը կ'ունենայ: Այդ ժամանակ լաւագոյն դարմանը եւ միջոցը աղօթքն է՝ կապուելու մեր Առաջնորդի, այսինքն՝ Աստուծոյ հետ:

Խոռվքի օրերուն, աղօթքը խաղաղութիւն կը շնորհէ եւ ամէնէն դժուար պահերուն, կը զօրացնէ մարդ արարածը՝ անոր ցոյց տալով իր կեանքի ուղղութիւնը:

Յաճախ դժուարութիւններ կ'ունենանք: Մարդկային հոգերը մեզ կը ծանրաբեռնեն: Կեանքի վազը մեր ուղղութիւնը կը պղտորէ: Այս բոլորը անցողիկ բաներ են: Այս բոլորը կրնանք յաղթահարել, երբ կը վստահինք ԱՂՕԹՔԻ զօրութեան:

Քառասնօրեայ պահեցողութիւնը լաւագոյն առիթն է, աղօթքի դառնալու եւ աղօթական կեանքի սկիզբը դնելու:

Աղօթական այս օրերուն կը մաղթենք, որ Աստուած առաջնորդէ մեզմէ իրաքանչիւրը, վերացնէ մեր յոռի սովորութիւնները, որպէսզի կարենանք մաքուր սրտով ու հոգիով փառաբանել իր Ամենասուրբ Անունը:

Մէկ խօսքով, եթէ ուզենք սահմանել աղօթքի իմաստը եւ ձեւը, կարելի է ըսել, որ աղօթքը ապրում է:

Ապրինք իրաքանչիւր բառ, որ կ'արտասանենք: Աղօթքը կեանք կը փրկէ: Աստուած կը լսէ մեզ:

Հայր Յակոբ

ՈՍԿԵՂԵՆ ՀԱՄԱՐ

«Ձեր սիրտերուն մէջ Քրիստոսի խաղաղութիւնը թող թագաւորէ, որովհետեւ Աստուած այդ խաղաղութեան կանչեց ձեզ՝ մէկ մարմինի մէջ, որ Քրիստոսի եկեղեցին է: Ուստի շնորհակալ եղէք Աստուծոյ» (Կողոսացիս 3:15):

“Let the peace of Christ rule in your hearts, since as members of one body you were called to peace. And be thankful.” (Colossians 3:15)





ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ...

ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՀԱՆԴԵՐՁ, ԴՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿՈՉՈՒԱԾ ԵՍ

«Հոգեւոր մարդիկ խիստ փորձութիւններու կ'ենթարկուին, որոնց աղբիւրը սկզբնական մեղքն է»:

ԱՆՄԵՂ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ ՍՏԵՂԾՈՒԵՑԱՆՔ – ԶԱՐՈՒԹԻՒՆԸ ԱԶԱՏ ԿԱՄՔԷՆ ՅԱՌԱՋԱՅԱԻ

1.- Բոլոր ոգեղէն էութիւնները, այսինքն՝ հրեշտակներն ու մարդկային հոգիները Աստուած կատարեալ անմեղութեան վիճակի մէջ ստեղծեց: Սակայն անոնցմէ ոմանց՝ սատանային եւ իր արքանեակներուն չարի փոխուիլը ազատ կամքի հետեւանքն է: Որովհետեւ անոնք իրենց սեփական ընտրութեամբ ուղիղ մտածողութեան ճանապարհէն շեղեցան: Եւ եթէ ըսենք, որ Աստուած զիրենք այդպէս չար ստեղծեց ապա զԱստուած իբրեւ անարդար դատաւոր յայտարարած կ'ըլլանք՝ սատանան դժոխքի կրակին դատապարտած ըլլալուն համար:

Կարգ մը հերետիկոսներ ըսին, որ նիւթը անսկիզբ է, այսինքն՝ յաւիտենական, եւ թէ նիւթն է ամէն բանի սկիզբը եւ այս սկիզբը զօրութիւնն է, որ ըստ ինքեան կայ: Այս արտայայտութեան հետեւեալ պատասխանը կու տանք.-

Ուրեմն, ի՞նչ է յաղթական զօրութիւնը: Անկասկած Աստուծոյ զօրութիւնն է: Ուստի յաղթուածը չի կրնար յաղթողին հաւասար ըլլալ ի՞նչ ուժի եւ ոչ ալ ժամանակի մէջ: Անոնք, որոնք կ'ըսեն, թէ չարութիւնը ճշմարիտ էութիւն է, ապա բան չեն գիտեր: Որովհետեւ Աստուծոյ համար էութեանական չարութիւն չկայ, քանի որ Աստուծոյ բնութիւնը կիրքերու եւ ցանկութիւններու ենթակայ չէ: Իսկ մեր պարագային, չարը ամբողջական զօրութեամբ մեր մէջ կը ծէ ինքզինք զգալի կը դարձնէ եւ ամէն տեսակի պիղծ ցանկութիւններ կը ներշնչէ: Սակայն անիկա բնաւ մեզի հետ չէ միախառնուած՝ ջուրը գինիին հետ միախառնուելուն պէս, այլ՝ որումին եւ ցորենին նման. որումը առանձին, ցորենը՝ առանձին, հակառակ անոր, որ երկուքը նոյն արտին մէջ կը գտնուին: Ճիշդ ինչպէս որ նոյն տան մէջ մէկ կողմը կրնայ գոյր ըլլալ, իսկ միւս կողմը՝ տանտէրը:

ՄԵՂՔԻՆ ՀՈԳԻՒՆ ՀԵՏ ՄԻԱԽԱՌՆՈՒԻԼԸ

2.- Զուրի աղբիւրը անխառն եւ վտիտ ջուր կը բխեցնէ, հակառակ անոր, որ աղբիւրին յատակը եւ ջուրին տակը ցեխ կը գտնուի: Բայց եթէ մէկը խառնէ ցեխը, ապա մբողջ աղբիւրը կը պղտորի: Նոյնպէս ալ հոգին, երբ կը բորբոքի, ապա կը պղծուի, չարութեան հետ կը միախառնուի եւ սատանան հոգիին հետ մէկ կը դառնայ՝ շնութեան թէ ոճիրի մէջ իրար հետ համաձայն զոյգ հոգիներու նման (տես Ա. Կր 6.16-17): Սակայն ուրիշ ատեն հոգին հաստատ կը մնայ, կը զղջայ իր կատարած մեղքին համար, կու լայ եւ կ'աղօթէ միշտ զԱստուած յիշելով, որովհետեւ եթէ հոգին անընդհատ չարութեան մէջ մտնուած ըլլար ապա ինչպէս կրնար նման բան ընել: Որովհետեւ սատանան բնաւ չ'ուզեր, որ մարդիկ ապաշխարեն ու զղջան, քանի որ ան գուրթ եւ ողորմութենէ լիովին դատարկ է:

ՄԵԾՆ ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐ
«ՀՈԳԵՒՈՐ ՔԱՐՈՉՆԵՐ»

Հայացուց՝ Մակար Արք. Աշգարեան
(Շարունակելի)

ԱՂՕԹՔ ԽՆԴԻԱՆՔՆԵՐՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Քու դիմացդ ծունկի եկած, ամբողջ սրտով կ'աղաչենք եւ գթութիւնդ կը հայցենք, բարերար եւ բազումողորմ Աստուած: Ինչպէս քու ծառաներուդ խոստացար՝ ըսելով. «Ինչ որ հաւատքով խնդրէք Հօրմէն՝ Որդիին անունով, պիտի տրուի ձեզի», այս պահուն շնորհէ եւ իրենց բարի կատարումին հասցուր քեզի հաւատացողներուս խնդրանքները, որովհետեւ քեզի ապաւինած ենք: Քու առատ ողորմութեամբդ միսիւրբ մեզ այս կեանքին մէջ, եւ առաջնորդելով՝ երկինքի անպատմելի արքայութեանդ հասցուր, որպէսզի ամենասուրբ Երրորդութիւնդ փառաբանուի եւ պատուուի. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

ԱՄԷՆ:

THE PRAYER OF THE MIND

VERY FEW MINISTERS will deny that prayer is important. They will not even deny that prayer is the most important dimension of their lives. But the fact is that most ministers pray very little or not at all. They realize that they should not forget to pray, that they should take time to pray, and that prayer should be a priority in their lives. But all these “shoulds” do not have the power to carry them over the enormous obstacle of their activism. There is always one more phone call, one more letter, one more visit, one more meeting, one more book, and one more party. Together these form an insurmountable pile of activities. The contrast between the great support for the idea of prayer and the lack of support for the practice of it is so blatantly visible that it becomes quite easy to believe in the ruses of the evil one which Amma Theodora described in such vivid detail.

One of these demonic ruses is to make us think of prayer primarily as an activity of the mind that involves above all else our intellectual capacities. This prejudice reduces prayer to speaking with God or thinking about God.

For many of us prayer means nothing more than speaking with God. And since it usually seems to be a quite one-sided affair, prayer simply means talking to God. This idea is enough to create great frustrations. If I present a problem, I expect a solution; if I formulate a question, I expect an answer; if I ask for guidance, I expect a response. And when it seems, increasingly, that I am talking into the dark, it is not so strange that I soon begin to suspect that my dialogue with God is in fact a monologue. Then I may begin to ask myself: To whom am I really speaking, God or myself?

Sometimes the absence of an answer makes us wonder if we might have said the wrong kind of prayers, but mostly we feel taken, cheated, and quickly stop “this whole silly thing.” It is quite understandable that we should experience speaking with real people, who need a word and who offer a response, as much more meaningful than speaking with a God who seems to be an expert at hide-and-seek.

But there is another viewpoint that can lead to similar frustrations. This is the viewpoint that restricts the meaning of prayer to thinking about God. Whether we call this prayer or meditation makes little difference. The basic conviction is that what is needed is to think thoughts about God and his mysteries. Prayer therefore requires hard mental work and is quite fatiguing, especially if reflective thinking is not one of our strengths. Since we already have so many other practical and pressing things on our minds, thinking about God becomes one more demanding burden. This is especially true because thinking about God is not a spontaneous event, while thinking about pressing concerns comes quite naturally.

Thinking about God makes God into a subject that needs to be scrutinized or analyzed. Successful prayer is thus prayer that leads to new intellectual discoveries about God. Just as a psychologist studies a case and seeks to gain insight by trying to find coherence in all the available data, so someone who prays well should come to understand God better by thinking deeply about all that is known about him.

In thinking about God, as with speaking to God, our frustration tolerance is quite low, and it does not take much to stop praying altogether. Reading a book or writing an article or sermon is a lot more satisfying than this mental wandering into the unknown.

Both these views of prayer are the products of a culture in which high value is placed on mastering the world through the intellect. The dominating idea has been that everything can be understood and that what can be understood can be controlled. God, too, is a problem that has a solution, and by strenuous efforts of the mind we will find it. It is therefore not so strange that the academic gown is the official garb of the minister, and that one of the main criteria for admission to the pulpit is a university degree.

This, of course, does not mean that the intellect has no place in the life of prayer, or that theological reflection and prayer are mutually exclusive. But we should not underestimate the intellectualism of the mainstream North American churches. If the public prayers of ministers inside as well as outside of church buildings are any indication of their prayer life, God is certainly busy attending seminars. How can we possibly expect anyone to find real nurture, comfort, and consolation from a prayer life that taxes the mind beyond its limits and adds one more exhausting activity to the many already scheduled ones?

During the last decade, many have discovered the limits of the intellect. More and more people have realized that what they need is much more than interesting sermons and interesting prayers. They wonder how they might really experience God. The charismatic movement is an obvious response to this new search for prayer. The popularity of Zen and the experimentation with encounter techniques in the churches are also indicative of a new desire to experience God. Suddenly we find ourselves surrounded by people saying, “Teach us to pray.” And suddenly we become aware that we are being asked to show the way through a region that we do not know ourselves. The crisis of our prayer life is that our mind may be filled with ideas of God while our heart remains far from him. Real prayer comes from the heart. It is about this prayer of the heart that the Desert Fathers teach us.

THE WAY OF THE HEART
Henri J. M. Nouwen





**THE BIG ISSUES
AND WHAT THE BIBLE SAYS ABOUT THEM**

SCHOOL & EXAM

What word would you use to describe your school? Perhaps you enjoy it and find certain subjects really interesting. However, maybe for you, the best part is when the bell rings for home time. Or maybe you wonder if you'll ever use equations or knowledge about different types of rocks in the real world. Even if we don't see much point in all the subjects, we have to study, our education can benefit us by teaching us how to turn up on time and how to learn new things, which will help us whatever we do in future.

There can be a lot of pressure to pass exams and do well, which can make us

REALLY ANXIOUS

There will be some things you are really good at and other things not so good. God has given us each different gifts, and it's important not to compare ourselves or our grades to the person next to us. Just do the best you can with the gifts and abilities God has given you!

One Bible verse (Colossians 3.23) encourages us to work at everything we do with all our heart and to imagine we're working for God, not people. This can inspire and motivate us even when we find the teachers annoying!

KEY BIBLE VERSES:
COLOSSIANS 3.23; PHILIPPIANS 4.6; LUKE 12.22-31

**JASHOU HYMN
FOR THE FIRST SUNDAY OF LENT
(MODE VIII)**

The Word, of the essence of the Father and co-existent with the Holy Spirit, joined his own image with our earthly nature, and adorned it with glory and placed it in the garden of delight.

Therein man joyfully exulted in gladness without grief, for he beheld God always coming down in the garden, and his soul was impressed by the radiance of the divine light.

Therefore pray for us, Mary Mother-of-God, to thine only-begotten Son that he may please to grant unto us, as unto the malefactor, to inherit again the glory of the paradise.

THE DIVINE LITURGY
OF THE ARMENIAN APOSTOLIC
ORTHODOX CHURCH

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

**ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՐԳ ՄԸ
ՏՕՆԵՐՈՒ ԵՒ ՕՐԵՐՈՒ ՎՐԱՅ**

ԲԱՐԵԿԵՆՂԱՆ

Բարեկենդան, ըստ ժողովրդեան Բարեկենտանք կամ Բարկենտանք, կը նշանակէ բարի կենդանութիւն. սովորականէն ատի ճոխ ուտելու, խմելու, խրախճանքի օր, որուն կը յաջորդէ շաբաթապահք մը: Իսկ Բուն Բարեկենդան, որուն կը յաջորդէ Մեծ Պահքը:

ՄԵԾ ՊԱՔԸ

Մեծ Պահք կը նշանակէ պահքերուն մեծը, նայելով օրապահքերու եւ շաբաթապահքերու, որոնք փոքր են:

Կ'ըսուի նաեւ Քառասունք, որովհետեւ քառասուն օր էր նախկին Մեծ Պահքը, Բուն Բարեկենդանի վաղորդայնէն մինչեւ Զ. եօթնակին Ուրբաթ օրը, որուն կը յաջորդէ Շաբաթ, Յիշատակ Ղազարու յարութեան եւ Աւագ Շաբաթայ, որ դարձեալ պահք է:

Քառասունքը ծագումով անլուծելի պահք էր. յետոյ Կիրակի օրերը լուծելի ըրին նաակատիքով. հետեւաբար Մեծ Պահքը 6 լուծելի Կիրակիներուն տեղը կը լեցուի Աւագ Շաբաթու պահքով եւ Քառասունքը սկզբունքով կը մնայ Քառասունք իբրեւ պահք օրեր: Պէտք է յիշել մեր Փրկիչին քառասունօրեայ ծոմը:

Մեծ Պահքը կը կոչուի նաեւ Աղուհացք, որովհետեւ հին ատեններ միայն աղ եւ հաց կ'ուտէին Մեծ Պահքին եւ կամ աղ ու հացով կը լուծէին ծոմը:

Մեծ Պահքը կ'էսր, կամ 24-րդ օրը, որ Չորեքշաբթի կը հանդիպի, կ'ըսուի ՄԻՋԻՆԷ:

Մեծ Պահքը եօթը Կիրակիները նուիրուած են կարգ մը յիշատակներու, բացի առաջինէն:

ա.- Բուն Բարեկենդան Դրախտի յիշատակին, որուն փափկութեան մէջ նախածնողք պահ մը ապրեցան անմեղ եւ երջանիկ կեանք մը:

բ.- Նախածնողաց արտաքսման այդ դրախտէն.

գ.- Անտակ որդոյ դարձին.

դ.- Տեսեսին.

ե.- Դատաւորին.

զ.- Գալստեան Փրկչին.

է.- Գալստեան Փրկչին յերուսաղէմ – Ծաղկազարդ:

ԲԱԲԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
(Շարունակելի 2)

**THE BOOK OF
1 KINGS**


WRITTEN: PROBABLY 650-530BC

WHAT YOU NEED TO KNOW:

1 and 2 Kings were originally one book, spanning about 400 years in total. Solomon, David's son, rules as king in much of this book. He was incredibly wise and led the nation into a time of great wealth. After his death, the kingdom divided into two – Israel in the north and Judah in the south. The book talks about good kings and bad kings, judges not by their wealth but by their loyalty to God. It is thought that this book was partly written while the Jews were in exile as an explanation of why the nation had fallen apart. The prophet Elijah is a key character in the second half of the book, calling the nation back to God.

WHY READ IT?

Solomon began his reign with power and fame, but he started to believe in his own brilliance and forgot about God. Then it all went wrong. Here we watch as kings either think they know better than God and let their pride rule, or love God and lead their people well. We also see what it looks like to stand up for God in a nation where those who love God are in the minority.



**THE LETTER OF
PHILIPPIANS**

WRITTEN: AROUND AD52-54 OR 58-64

WHAT YOU NEED TO KNOW:

Philippians is a letter of thankfulness, encouragement and joy. Paul wrote it to the church in Philippi while he was a prisoner under house arrest, and he starts by thanking them for their support. It's a deeply loving and friendly letter to the church, but it's challenging, too, as he encourages them to keep growing in faith and outlines what growing in faith might look like!

WHY READ IT?

This letter is great at giving us pointers on how to grow in our faith, serve others and spread the good news of Jesus. It's about keeping going in our Christian life, and it challenges us to think about the kind of people God might want us to be.

SPOTLIGHT:

The church in Philippi was set up by Paul on his second missionary journey (see Acts 16), and it was the first church in Europe: Philippi was in northern Greece. It wasn't a huge city, but it was significant. Citizens of Philippi were automatically give Roman citizenship, and hey were proud of this. Even though Philippi was over 1000 miles away from Rome, the people dressed like Romans and spoke Latin, the Romans' language. There was also a strong Roman military and leadership presence. It's no surprise, then, that Paul uses the idea of citizenship to talk about the Christian faith, as this would have made sense to the Philippians.





ՆԻԿԻՈՅ ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎԻ 1700-ԱՄԵԱԿ

«ՀԱՒԱՏԱՄՔ Ի ՄԻ ԱՍՏՈՒԱԾ,
Ի ՀԱՅՐՆ ԱՄԵՆԱԿԱԼ...,
ԵՒ Ի ՄԻ ՏԵՐ ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍ...,
ԵՒ Ի ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ»:

1.- Աստուած եւ աստուածաբանութիւն: Աստուածաբանութիւնը այն գիտութիւնն է, որ կը խօսի Աստուծոյ մասին, եւ կը քննէ հաւատքին վերաբերող բոլոր երեսները: Այդ գիտութեան հիմը Աստուածաշունչն է, առանց որուն՝ աստուածաբանութիւնը որեւէ բան չի հաստատեր: Բայց աստուածաբանութեան մէջ մտածողութեան այն կերպը, որ կը գործածուի՝ իմաստասիրական (փիլիսոփայական) մտածողութեան կերպն է:

2.- Կրնանք ճանչնալ զԱստուած: Աստուած իր բնութեամբ անճանաչելի է, այսինքն՝ կարելի չէ ճանչնալ: Մենք զԱստուած ճանչնալու երկու հիմնական կերպեր ունինք.-

Ա) Յայտնութիւնը, այսինքն՝ Աստուածաշունչը եւ բերանացի յայտնութիւնը: Մենք զԱստուած կը ճանչնանք միայն այնքան՝ որքան որ ինք ինքզինք յայտնած է մեզի անցեալին՝ նահապետներուն եւ մարգարէներուն միջոցաւ, եւ ներկայ ժամանակին՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

Բ) ԶԱստուած կը ճանչնանք իր գործերէն, այսինքն՝ ստեղծագործութենէն եւ իր նախախնամութենէն:

3.- Աստուած եւ գիտութիւն: Գիտութիւնը չ'ըզբաղիր Աստուծոյ հարցով, ոչ ալ աստուածային ճշմարտութիւններով: Անոր առարկան տիեզերքն է, աշխարհը եւ մարդը: Միւս կողմէ, աստուածաբանութիւնը գիտութիւն է որոշ իմաստով, որովհետեւ իր եզրակացութիւններուն համար Աստուածաշունչն է գատ (եւ Աստուածաշունչն անկախ) կը հիմնուի մարդկային միտքի դատողութեան եւ ապացոյցներու վրայ: Օրինակ, անհաւատի մը խօսած առեւ կարելի չէ Աստուծոյ գոյութիւնը ապացուցանել Աստուածաշունչով: Պէտք է խօսիլ՝ միտքին դիմելով: Արդ, մարդկային միտքին համար Աստուծոյ գոյութեան ապացոյցներն են.-

Ա) Աշխարհին գոյութիւնը: Ուրիշ բան ինքնիրեն չի գոյանար. անհրաժեշտօրէն բացարձակ Գոյութիւն մը պէտք է ըլլայ պատճառը բոլոր տեսանելի եւ անտեսանելի գոյութեանց: Ամէն ինչ միակ է մը կը սկսի, եւ առաջին ու բացարձակ Միակը Աստուած է:

Բ) Շարժումին գոյութիւնը: Նիւթը ինքնին անկեանք եւ անշարժ է, եթէ իրմէ դուրս շարժիչ մը չունենայ: Այդ շարժիչը ինք նիւթ եւ նիւթէն չի կրնար ըլլալ. պէտք է աննիւթ Գոյութիւն մը ըլլայ, որ Աստուած է:

Գ) Տիեզերական կարգաւորութեան գոյութիւնը: Այս կարգաւորութիւնը պատահականութեան ծնունդը չի կրնար ըլլալ: Ինքնիրեն ձգուած բնութիւնը դէպի անկարգութիւն կ'երթայ: Կարգաւորութիւնը տիեզերքին ետին գործող Մեծ Միտքի մը կամ Բանականութեան մը արդիւնքը միայն կրնայ ըլլալ:

Դ) Մարդուն մէջ անհունին հասնելու փափաքը, կատարելութեան ցանկութիւնը, անմահութեան ձգտումը, բարոյական հասկացողութեանց եւ խղճմտանքին գոյութիւնը կը հաստատեն Աստուծոյ գոյութիւնը:

4.- Մէկ Աստուածութիւն եւ Սուրբ Երրորդութիւն: Աստուած մէկ է: Ամբողջ Աստուածաշունչը կը խօսի այս միակութեան մասին, եւ անդադար կը շեշտէ զայն, զգուշացնելու համար բազմաթիւ աստուածներ պաշտելու մոլորութենէն, որ մարդիկը Աստուծմէ հեռացնելու սատանայական հնարքն է:

Աստուած մէկ է: Հին Կտակարանին մէջ անիկա ինքզինք կը յայտնէ իբրեւ Ամենակալ Աստուածը, Ամենակարող Աստուածը, Յաւիտենական Աստուածը, «Ան՝ որ է» (Ել 3.14, 6.3): Նոր Կտակարանին մէջ Աստուած ինքզինքը կը յայտնէ իբրեւ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի:

«Երրորդութիւն» բառը չկայ Աստուածաշունչին մէջ, բայց անոր հասկացողութիւնը կամ վարդապետութիւնը կու գայ Աստուածաշունչէն, Հին Կտակարանի մէջ քողարկուած ձեւով, իսկ Նոր Կտակարանին մէջ՝ բացայայտօրէն (Մտ 28.19: Բ. Կր 13.13: Հմմտ Ա. Կր 12.4-6):

Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին երեք անձեր են, բայց ո՛չ երեք Աստուածներ: Անոնք մէկ եւ նոյն Աստուածն են: Իրենց բնութեամբ եւ յատկութիւններով, իրենց կամքով ու գործով, իրենց կարողութեամբ եւ իշխանութեամբ նոյնն են անոնք, բայց իրենց ներքին կապերով եւ յարաբերութիւններով կը զանազանուին, առանց երեք շփոթուելու իրարու հետ: Օրինակ.-

Ինչպէս մարդկային հոգի ըսելով երեք բաներ կը հասկնանք.- կամքը, որմէ ծնունդ կ'առնէ միտքը, եւ որմէ կը բխի կարողութիւնը, եւ այս երեքը՝ կամք, միտք եւ կարողութիւն, երեք անշփոթելի բաներ ըլլալով հանդերձ՝ երեք հոգիներու մասին չենք խօսիր, այլ մէկ եւ միակ հոգիի մասին՝ Նոյնն է երեք անձնատրութեանց պարագային, որոնք մէկ միակ ճշմարիտ Աստուածն են:

5.- Հայրն Աստուած: Աստուած ամէն բանի սկիզբն է, սկիզբը սկիզբներուն, միակ սկիզբը ամէն բանի, ինքը ըլլալով միակ անսկիզբը: Այս ճշմարտութիւնը կը վերաբերի Սուրբ Երրորդութեան, բայց յատուկ կերպով զայն կը մասնատրենք Հայր Աստուծոյ համար: Որդին եւ Սուրբ Հոգին թէպէտ անսկիզբ են եւ անժամանակ, բայց իրենց պատճառը եւ սկիզբը ունին Հօր Աստուծոյ մէջ, այնպէս՝ ինչպէս ճառագայթն ու ջերմութիւնը արեւէն սկիզբ կ'առնեն բայց անոր հետ միաժամանակ կան (եւ ո՛չ թէ յետոյ), որովհետեւ արեւ չկայ առանց ճառագայթի եւ ջերմութեան:

6.- Աստուած Հայրը՝ աստուածութեան եւ ապագայ Եկեղեցւոյ Ընտանիքին յարեբաբար: «Հայր» կոչումը Սուրբ Երրորդութեան առաջին անձնատրութեան կու տանք, որովհետեւ Որդին ինք, մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, միշտ այդպէս կոչեց զայն: Այդ անունը մարդկային հայրութեան հասկացողութեան հետ նմանութիւն ունի բայց նոյնը չէ: Հայր մը իր որդիին հետ նոյն բնութիւնը ունի, բայց տարիքով ու փորձառութեամբ անկէ մեծ է, նկարագրով, կամքով ու գործով անկէ տարբեր է: Այդպէս չէ Աստուծոյ Որդիին եւ Հօրը պարագային: Որդին ո՛չ միայն Հօրը բնութիւնը ունի, այլ նաեւ նոյն կամքը, նոյն իշխանութիւնը, նոյն փառքը եւ պատիւը: Անիկա «Հօրը փառքին լոյսը եւ անոր էութեան ճշգրիտ պատկեր»ն է (Եբր 1.3): Բայց Որդի կը կոչուի՝ մեզի համար, մեզի սորվեցնելու համար՝ թէ ինչպէս կրնանք ճշմարիտ եւ կատարեալ որդիներ ըլլալ Աստուծոյ:

Եւ արդարեւ Աստուած Հայր է նաեւ մեզի համար: Այս հայրութիւնը բնութենական չէ, այսինքն՝ մենք Հօրը բնութենէն ծնած չենք: Մեր պարագային Աստուծոյ հայրութիւնը հոգեւոր է. մենք հաւատքի ճամբով Աստուծոյ որդեգիրներ ենք: Որովհետեւ Աստուծոյ յաւիտենական ծրագիրն է՝ մարդոցմէ իրեն ժողովուրդ մը կազմել, եւ այդ ժողովուրդը իր սեփական «ընտանիքը» դարձնել: Այդ ժողովուրդը եւ ընտանիքը Աստուծոյ Եկեղեցին է, որ մենք բոլորս ենք (Եփ 2.19): Ահա թէ ինչու՝ Հաւատամքին մէջ երբ կ'ըսենք՝ «Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ» (Կը հաւատանք մէկ Աստուծոյ՝ ամենակալ Հօր), անով նաեւ կ'արտայայտենք մեր որդիութիւնը Աստուծոյ, եւ մեր կոչումը՝ իբրեւ Աստուծոյ Ընտանիքին անդամները:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՒԱՏԱՄՔԻՆ
Զարեհ Արք. Ազնաւորեան